կեղեցւոյ ժողովեալ յուսուցանել զկինն եւ զնոր մա-տեան աստուածաշունչ գրոց զնուրբ եւ զարտաքին փիլիսոփայութիւն ամս տասն», տեղի իշխան Ազիզ-պէկի և նորա Աւագ և Զաքարիա որդիների հովանա-ւորութեան տակ(*)։ Նորա աշակերտներից Գրիգոր գրիչ ևս 1415 թուին կենսագրական տեղեկութիւններ է հաղորդում Սիմէոնի Եղուարդի չրջանի գործունէու-թեան մասին. «եւ դաս հրամել. բզմ. ժկ. ր. (որպէս) ի քս.է շնորհեալ մեզ։ Եւ ապա ի խնդիր ամ. ՅԾա-շունչ գրոց եւ մեկնչաց. եւ ստացել. բզմ., զոմանս գրելով եւ զոմանս գրել տալով ընչուք, որ եւ զայս բժնից. մեկնիչս (հաւանօրէն Լամբրոնացու) ստացաւ. ի վայելումն անձին իւրյ. եւ աշկրտաց. իւրոց»(**)։ Հէնց այս Գրիգոր գրիչը դարձեալ գրել է 1411 և 1414 թ. մի մի Տաթեւացու Հարցմանց գիրք «ի գաւառս Արարատեան ի գեղաքաղաքս յեղիվարդ ի վանքս սբ. Յակոբ, առ ոտս երջանիկ պետին Սիմէոն բաբունի»։ Այստեղ է եւ Մատթէոս նշանաւոր գրիչը, դեռ եւս իբրեւ գրոց աշակերտ, որի մասին խօսք կը լինի։ Յովհաննէս Երզնկացին գրել է «առ ոտս Սիմէոնի» նոյն տեղում № 1215 Էջմ.ի ձեռագիրը։ Իւր կեանքի վերջին տարիները նա հաստատուած էր Կոտայքի Զա-գավանքում, ուր եկեղեցական և վանական բարե-կարգութիւններ է մտցնում, շինարարութիւններ կա-տարում. մեռել է 1428 թուին(***)։

Թովմա Մեծոփեցին պատմում է իւր ուսուցչի՝ Մեծոփայ վանքի վանահայր Յովհաննէս վարդապետի մահուան մասին 1410 թուին, Հաւուց Թառում, ուր եկել էր նաև «երկիր պագանել աստուածամուխ դե-զարդեանն(****)։ Ապա 1423 թուին Դաւիթ քահանան գրում է մի Մաշտոց, սկիզբը «ի նախագրական սուրբ ուխտն ի մեծ Այրիվանս և կատարումն յաստուածա-պահ գիւղաքաղաքիս Գառնի»(*****)։ Փարիզի Ազգային մատենադարանի հայ ձեռագիրներից մէկը, «մանրուս-մունք որ կոչի տեսր» այսինքն խազգիրք, գրուած է 1429 թուին Գրիգոր վարդապետի ձեռքով, «ի գա-ւառս Գառնոյ, ի յանապատս, որ կոչի Մանուէլի, որ է սիրտ լերինս Այրիվանուց, յորում բազմեալ կայ Գեղարդն ՅԾամուխ։ Ընդ հովանեաւ սբ. ԱԾածնիս և սբ. . . . (մի բառ փչ. կաթուղիկէս?) և սբ. ճգնա-ւորաց սբ. գերեզմանացս. ի յառաջնորդութեա. սբ. մենաստանի Ստեփանոս միայնակեցիս»։ Ցիշատակա-բանի մէջ պատմուած է Լանկթամուրի որդու Շահռուխի արշաւանքը, Դաւրէժի առումը և Թուրքմանների գե-րեվարութիւնն ու հալածանքը. «բայց այս միայն էր բարուի., զի սպանումն և արիւն ոչ արար. և ըզ-թուրքման ազգն ցիրուցան արար ընդ երեսս երկրի. և ազգս քրիստոնէից փախստական ի ծերպ և ի ծակ մտած և յիւրեանց բնակուէն. ելած. և փախուցել. թուրքմանն, թալանեաց զաշխարհս Հայոց. զհացն եւ զգինի հանին և մեծ աւերուի. ածին աշխարհիս»։ Գրիգոր վարդապետը Այրիվանքի միաբաններից չէ, այլ «փախստական եկաք ի յանապատս. և ամիս եր-կու մնացաք ի տեղ. և մենարանիս հայրն իւր միա-բանաւքն ծառայութի. ոչ սակաւ արարին, զի բզմ. աշխատանք կրեցին ի վր. մեր, և խնդրեցին զայս մանրուսմունս». ապա խնդրում է յիշել Այրիվանքի միաբաններին, «զՍտեփանոս միայնակեացն . . . եւ զՍտեփանոս աբեղայն . . . զԱռաքել կրաւնաւորն եւ զԱնտոն ճգնաւորն»։ Գրիգոր վարդապետի ուսուցիչն է Գէորգ վարդապետ և իւր «որդիացեալն է» Յով-հաննէս կրօնաւոր(*)։

Բերլինի արքայական մատենադարանի հայ ձե-ռագիրներից № 37 շարականը նոյնպէս գրուած է «ի սբ. գերահռչակ . . . սբ. ուխտս Այրիվանքս ի սկիզբն և մայրն վանորայից, ընդ հովանեաւ սքանչելագործ տիզին և արեամբ ներկեալ անմահին յի. սբ. գեղար-դեանն»։ Մագաղաթը իւր ձեռքով գնել է և գրել Մատթէոս և ապա նուիրել իւր «ձեռնասունդ» ա-շակերտ Յովհաննէս աբեղային, իսկ սա ծաղկել է տուել» ոսկեճաճանչ երանկաւք և ազգի ազգի գու-նաւք»։ Ընտիր է եղել և օրինակը՝ Սսոյ առաջին ի-մաստունների և վարժապետների օրինակից, «զոր էր գրեալ ձեռամբ Յովհաննէս եպիսկոպոսի Անոյ մակա-նուն Ոսկեփոր վերաձայնելոյ»(**)։ Ձեռագիրը գրուած է ի թուականութեանս հայոց ՊՂԶ։ Զարմանալի է, որ Աթոռի փոխադրութեան առթիւ գումարուած ժո-ղովում Գեղարդի վանքի կողմից ներկայացուցիչ չէ յիշուած, մինչդեռ այս ժամանակ ոչ միայն չէն էր, այլ և գրչութեան մնացորդներից դատելով, պայծառ վիճակի մէջ։

Էջմիածնի մատենադարանի № 1005 ՆԺ. Ցայտ-աւուրքը (Խաչիկ Ծ. Վարդապետի բերած) լաւ բոլոր-գրով, թղթի վերայ գրել է Մատթէոս գրիչ, որ ոչ այլ ոք է, բայց եթէ Բերլինի շարականի գրող Մատ-թէոսը. նա «գրոց աշակերտ» էր Սիմէոն Այրիվանե-ցու մօտ Եղուարդում, երբ Յովհաննէս Երզնկացին գրում էր 1413 թուին իւր ձեռագիրը. Սաղմոսի օրի-նակը այս Մատթէոսն է նրան տալիս։ Գրոց աշակերտ Մատթէոսը յետագայում դառնում է նշանաւոր գրիչ, որ Եղուարդի չրջանում 1464, 1465 և 1469 թ. թ. գրել է մի մի ձեռագիր, վերջինը Մանուէլ Բ. Ազիբէ-կենցի համար. առաջնի նմանահանութիւնը տալիս է

(*) Ալիշան. Հայապատում. 569։
(**) Ձեռ. Էջմ. № 94/3276։
(***) Ալիշան. Հայապատում. 569։
(****) Թովմա Մեծոփեցի. հրատ. Շահնազարեանցի, Փա-բիզ. եր. 61։
(*****) Փիրղալէմեան. Նոտարք. 73։

(*) Ըստ ձեռագիր ցուցակի Զոհրաբի № 33, որ գտ-նուում է Բերլինում։
(**) Verzeichniss der armenischen Handschriften. Dr. N. Karamianz. եր. 30։ Յովհաննէս «Ոսկեփոր»ը գրել է և մի Աստուածաշունչ Մանուէլ Ա. եպիսկոպոս Ազիբէկենցի համար. նկարագրութիւնը Տաշեան. Ցուց. № 55, 1368-1375 թ.։ Տես և մեր Ազիբէկենք, Բանբեր, Գիտ. Ինստիտուտի, եր. 193։